

յանձն առնեն դնել Դպրանոցին համար կարեւոր չէնք ու կարասիները: Այն գումարը դոր Ս. Ժողովս եւ Հռոմի Հայոց Հիւրանոցը կարող են տարեկան տրամադրել, պիտի կարենայ միայն հինգ ուսանող, անոնց վերակացուն եւ ծառայ մ'ապրեցնել: Այս գումարը կը գոյանայ հետեւեալ կերպով. Միւսայի արքեպիսկոպոսի գումարէն, որ 2000 սկուդ է, կարելի է տարին 100 սկուդ ստանալ. Նորին Սրբութեան տնօրինելովը կարելի է նոյննպատակին յատկացնել այլ եւս 70 սկուդ երկու կարգինալական մատանիներէն. դարձեալ նոյն Դպրանոցի կրնայ գործածուիլ այն 250 սկուդ գումարը, որ կրնայ գոյանալ Հայոց Հիւրանոցի մուտքէն եւ վարձքէն, եթէ հաճի Նորին Սրբութիւնը, այնպէս ինչպէս շնորհուած էր Գրիգոր ԺԳ.էն անդլիական դպրոցի կառուցման ժամանակ: Վասն զի Հայոց Հիւրանոցի մուտքը ըստ մեծի մասին ծառաներուն կը գործածուի, որոնց ըրածը աննշանակ բան է: Իսկ հայ աղքատներու համար, որոնք երբեմն երբեմն կը հանդիպին քաղաքս, հաղիւ թէ 26 սկուդ ծախքը լլայ: Այս ծառայութիւնը Դպրանոցն ալ կարող է ընել. եւ հիւրերը աւելի պատշաճ է Դպրանոցին մէջ ընդունիլ, քան այն Հիւրանոցի տան մէջ, որ՝ տեղւոյն եւ տան անպիտանութեան պատճառաւ՝ աւելի չունենէր քան մարդիկ պատասպարելու յարմար է»:

Նոյն տարւոյ Սեպտեմբերին գումարուած Նիստին մէջ ի գիտութիւն կ'առնէ Ս. Ժողովը